Հաշվետվություն

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հովհաննես Քոչարյանի Վրաստանի Թբիլիսի քաղաք գործուղման արդյունքների մասին

Գործուղված անձ՝

- Հովհաննես Քոչարյան,

Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ,

Գործուղման վայրը և ժամկետները՝

- Վրաստանի Թբիլիսի քաղաք, 2018թ. հուլիսի 1-ից 4-ը,

Հրավիրող կողմը՝

- Վրաստանի ներքին գործերի նախարարություն

Գործուղման նպատակը և քննարկված թեմաները՝

-Ծանոթություն Վրաստանի երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում վարչական պատասխանատվության բալային համակարգի և ոստիկանական շարժական պարեկային ծառայությունների կազմակերպման և գործունեության կարգի հետ,

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

-2018թ. հուլիսի 2-ին Վրաստանի ՆԳՆ մասնաշենքում հանդիպում տեղի ունեցավ Վրաստանի ՆԳՆ պարեկային ոստիկանության տնօրենի տեղակալ Լևան Մաճավարիանիի հետ: Հանդիպման ընթացքում Լ.Մաճավարիանին ներկայացրեց Պարեկային ոստիկանության ստեղծման պատմությունը, կառուցվածքը, գործառույթները, համապատասխան վիճակագրությունը: ՀՀ ոստիկանության պետի տեղակալը ծանոթացավ երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում վարչական պատասխանատվության բալային համակարգին և ոստիկանական շարժական պարեկային ծառայությունների կազմակերպման և գործունեության կարգին: Նույն օրն այցելություն է իրականացվել Վրաստանի ՆԳՆ համատեղ գործողությունների կենտրոն և «112» օպերատիվ կառավարման կենտրոն, որոնց ղեկավարների կողմից

ներկայացվեցին կենտրոնների ստեղծման պատմությունը, կառուցվածքը, գործառույթային պարտականությունները և հետագա զարգացման ծրագրերը:

2018թ. հուլիսի 3-ին այցելություն իրականացվեց Վրաստանի ՆԳՆ Ակադեմիա: Վերջինիս ղեկավարության կողմից ներկայացվեցին ակադեմիայում ուսումնառության հիմունքները, նոր նշանակվող ոստիկանության ծառայողների ոսումնառության ուղղությունները և ակադեմիայի գործունեությունը, կրթական ծրագրերը:

Նույն օրն այցելություն իրականացվեց Վրաստանի ՆԳՆ սպասարկման գործակալություն, որի ղեկավարության կողմից ներկայացվեց գործակալության կառուցվածքը և գործառույթները, ցուցադրվեց երթեւեկության կանոնների խախտման հետ կապված տուգանքների բողոքարկման/վճարման միասնական պատուհանի աշխատանքը:

Վրաստանի ՆԳՆ մասնաշենքում հանդիպում տեղի ունեցավ Վրաստանի ՆԳ նախարարի տեղակալ Մեհրաբ Մալանիայի հետ, որի ընթացքում ամփոփվեցին հանդիպումների և քննարկումների արդյունքները:

Պարոն Մալանիան իր պատրաստակամությունը հայտնեց աջակցություն ցուցաբերել ՀՀ-ում վրացական փորձը ներդնելու՝ թե տեխնիկայի ձեռքբերման, թե փորձի փոխանակման նպատակով մասնագետներ ՀՀ գործուղելու հարցերում:

Հանդիպման ժամանակ ընդունված Որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

-Գործուղման արդյունքները կօգտագործվեն ՀՀ ոստիկանության իրավական բարեփոխումների կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ,
ոստիկանության գնդապետ **Հ.Քոչարյան**